

ՀԱՅՐՈՅԱԼՔ

Լերան վրայ, լուսնին տակ,
 Հալածուածները նախճիրէն կու լային.
 Պառաւ մ'յանկարծ անոնց մէջտեղ կանգնեցաւ,
 Ու մէկ ձեռքով յենացուպին կըռթընած՝
 Միւսը՝ ջըղոտ բռունցքով ցըցեց դէպ երկինք.
 Յետոյ ասանկ ըսկըսաւ.
 -Աստուած, Աստուած Լուսաւորչի, Ներսէսի,
 Աստուած Նենգո՛ղ, Աստուած արեանմբ մարմնաբոյծ՝
 Ինչպէս Պիլթոն մ'անապատին մէջ պառկած...
 Այսօր ահա կ'ընդվզիմ
 Ութսունամեայ հաւատքիս մէջ ջերմեռանդ,
 Եւ մայրութիւնս ու հայութիւնս՝ որոնց յար
 Սրտիս մէջ թո՛յն ջամբեցիր,
 Իբրեւ երկու խայթ խըղճի
 Կայծակնահիւս կողերուդ մէջ կը մըխեմ.
 Դու որ մատղաշ տարիքիս
 Հարսանեկան քօղս արիւնով ներկեցիր,
 Եւ թոյլ տըւիր՝ որ թելերուս վրայ ջարդեն
 Լուրթ քօղէքներըս բնիկ հողով թըրծընած,
 Դուր որ այս ծեր տարիքիս մէջ տակաւին
 Երիկամունքըս լոկ քաղցով լեցուցիր
 Եւ սըրբազան ցուպը մեկնող հասակիս
 Թաթախեցիր արեան մէջ,
 Դու որ Որդւոյդ Խաչն ողբալէն բըլջակնած
 Իմ աչքերս այս սահմանեցիր դեռ լալու
 Մորթընած եօթը զաւակ,
 Դու՝ զերդ Վիշապ երկնածին
 Երկու թաթերդ երկու ամպի վրայ դըրած,